



# «Լեռ և ջուր»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

---

«Չիչխան» փոքր ՀԷԿ-ի վերազինում և հզորացում  
Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական  
գնահատման հայտ

Կատարող՝  
«Քոնսեկորդ» ՍՊԸ տնօրեն՝  
Վ. Թևոսյան



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ .....	3
1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԶԵՌՆԱՐԿՈՂԸ .....	5
2. ԵԼՔԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ .....	7
2.3 Ռեյիեֆ, երկրաձևաբանություն .....	8
2.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ.....	19
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	22
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ .....	24
Շինարարական աշխատանքները իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված, «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում, որտեղ բացակայում է բուսածածկը և հատման ենթակա ծառերը:.....	25
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ .....	27
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ Հավելված 1.....	29
ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ (ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ) ԾՐԱԳԻՐ Հավելված 2 .....	32

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի կամ նախագծի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Նախատեսվող գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին” ՀՀ օրենքի բոլոր այն նախատեսվող գործունեության տեսակները, որոնք ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, պարտադիր կարգով ենթակա են բնապահպանական փորձաքննության:

«Լեռ և ջուր» ՍՊ ընկերության կողմից շահագործվող ”Չիչխան” փոքր հիդրոէլեկտրակայանը (ՓՀԷԿ) կառուցված է ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում՝ գյուղից 0.7 կմ հյուսիս-արևելք՝ Չիչխան գետի ձախ ափին: ՓՀԷԿ-ի ջրընդունիչը կառուցվել է Չիչխան գետի Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա: Ոռոգման ջրանցքի 7-րդ կմ հատվածում կառուցված ջրընդունիչից իրականացվում է ”Չիչխան” փեկ-ի ջրառը:

Համաձայն նախկին նախագծի ջրանցքին կից 1595.4 մ նիշը կառուցվել է ճնշումային ավազան: Ջրընդունիչից հաշվարկային ելքը մուտք է գործում 361.5 մ երկարության, 620 մմ տրամագծի ճնշումային խողովակաշար: Ճնշումային խողովակաշարը ՊԿՀ + 62.5-ում հատելով գետը, հատման կետերում խարսխային հենարաններով, հաշվարկային ելքը մոտեցնում է ՀԷԿ-ի շենքին, որտեղ տեղադրված են երկու հիդրոագրեգատներ: Համաձայն նախկին նախագծի ներքին բիեֆում հաշվարկային նիշը կազմում է 1498.70մ:

”Չիչխան” ՓՀԷԿ-ի օգտագործած ջրերը հեռացնող ջրանցքով թափվում են Չիչխան գետ:

Համաձայն նախկին նախագծի ”Չիչխան” ՓՀԷԿ-ի ջրաէներգետիկ ցուցանիշներն են.

- Դրվածքային հզորություն՝ 605կվտ
- Ստատիկ ճնշում՝ 96.7մ
- հաշվարկային ելք՝ 0.8խմ/վրկ
- Հաշվային ճնշում՝ 95.2մ

Նշված ցուցանիշներով ”Չիչխան” ՓՀԷԿ-ի կառուցման համար «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը 2006թվականի հուլիսի 25-ին Բնապահպանության նախարարության կողմից տրվել է ԲՓ 80 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն: Ընկերությանը 2006թ օգոստոսի 11-ին 15 տարի ժամկետով ՀՀ

Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից տրվել է էլեկտրաէներգիայի արտադրության թիվ 0214 լիցենզիա: Հանձնաժողովի 2021թ. որոշման Նախագծի համաձայն որոշվել է 15 տարով երկարաձգել «Լեռ և ջուր» ընկերության տրված լիցենզիայի գործողության ժամկետը՝ մինչև 2035թվական:

Ընկերությանը Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունում ջրառի /H=1740.0մ/ և ջրահեռացման /H=1640.0մ/ կետերը տարբերվում են և չեն համապատասխանում "Չիչխան" ՓԿԷԿ-ի կառուցման նախկին նախագծով և փորձաքննական եզրակացությամբ տրված ջրառի և ջրահեռացման կետերին: Ջրառի նիշը նախագծում նախագծողի կողմից վրայակի պատճառով 1740.0-ի փոխարեն եղել է 1595.4մ է, իսկ ջրահեռացման նիշը՝ 1740.0մ-ի փոխարեն եղել է 1498.7մ:

Տեղում, ջրառի կետում Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ նիշերը ճշտելուց հետո, 2013 թվականին ընկերությանը ճշտված նիշերով տրվել է ջրօգտագործման թույլտվություն: Ընկերության կողմից վերանայվել է նաև ՓԿԷԿ-ի կողմից օգտագործվող հաշվարկային ելքի քանակը և բնապահպանական ելքի չափաքանակը և Ջրօգտագործման թույլտվությամբ «Չիչխան» ՓԿԷԿ-ի հաշվարկային ելքը ավելացվել է առավելագույնը 1.3 խմ/վրկ ջրաքանակ /վարարաջրերի ժամանակ ապրիլ-հունիս ամիսներ/, ինչը սահմանվել է նաև Ընկերությանը տրված ջրօգտագործման թույլտվությամբ: Իսկ բնապահպանական ելքը գործող օրենսդրությամբ սահմանվել է ըստ ամիսների և նվազագույնը կազմում է 0.20խմ/վրկ /հունվար ամիս/, իսկ առավելագույնը՝ 0.96խմ/վրկ /ապրիլ ամիս/:

Վերը նշված ցուցանիշների համապատասխանության և շտկման, ինչպես նաև նոր փորձաքննական եզրակացության ստացման վերաբերյալ պահանջ է եղել նաև ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021թվականի որոշման Նախագծում:

Ելնելով ՀՀ օրենսդրական պահանջներից "Չիչխան" ՓԿԷԿ-ի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ նոր փորձաքննական եզրակացություն ստանալու համար: Նշված պահանջը հանդիսանում է 2021թվականի մայիսի 25-ին տրված է թիվ 0210-2 ջրօգտագործման թույլտվություն Ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող պայմանների 4. Կետը:

Համաձայն "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի բոլոր այն նախատեսվող գործունեության տեսակները, որոնք ազդեցություն ունեն շրջակա միջավայրի վրա, պարտադիր կարգով ենթակա են փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի պահանջների հիման վրա և ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի

վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

«Չիչխան» ՓՎԷԿ-ը վերազինումից հետո կունենա հետևյալ ջրաէներգետիկ ցուցանիշները.

- Դրվածքային հզորություն՝ 1500կվտ
- Ստատիկ ճնշում՝ 96.7մ
- հաշվարկային ելք՝ 1.3խմ/վրկ
- Միջին տարեկան արտադրված էլեկտրաէներգիայի քանակ՝ 3.4 մլն կվտ.ժ:

## **1. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ, ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ՁԵՌՆԱՐԿՈՂԸ**

Նախատեսվող գործունեության ձեռնակող է հանդիսանում «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությունը, որը հանդիսանում «Չիչխան» փոքր ՀԷԿ-ի սեփականատեր և շահագործող:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ ՀՀ Լոռու նարգ, Շիրականուտ համայնքի վարչական տարածք, հեռ.094 13 22 22

Ներկայացվող գործունեության անվանումն է՝ «Չիչխան» փոքր հիդրոէլեկտրակայանի վերազինում:

Տնտեսական զարգացումը և առաջընթացը անհնար են առանց օրեցօր աճող էներգիայի պահանջի բավարարման: Ներկայում էներգիայի արտադրության հիմնական հումք է հանդիսանում օրգանական վառելիքը (ածուխ, նավթ, գազ): Սակայն, սկսնհայտ է, որ օրգանական վառելիքը կարող է բավարարել համաշխարհային էներգետիկայի պահանջները միայն մասամբ: Հաշվի առնելով, որ օրգանական վառելիքի պաշարները արագորեն սպառվում են, օրակարգի հրատապ խնդիր է դառնում էներգիայի արտադրության այլ աղբյուրների ներգրավումը: Դրանց թվին է առաջին հերթին դասվում ջրային ռեսուրսների ներուժը:

Հայաստանի Հանրապետությունը չունի սեփական հետազոտված ածխաջրածնային ռեսուրսներ, թեկուզ հանրապետության էներգետիկ հաշվեկշռում զգալի տեղ են զբաղեցնում ջերմային կայանները:

Հաշվի առնելով ածխաջրածնային վառելիքի գների աճը և դրանց ներկրման ռիսկայնությունը վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձվում փոքր հիդրոէներգետիկայի զարգացմանը:

Ըստ «Վերականգնվող էներգետիկայի ծրագրի» (16) Հայաստանում ՓՎԷԿ-երի կառուցման գործընթացը համարվում է վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացման առաջատար ուղղություն: Որպես խթանման միջոց փոքր ՀԷԿ-երի համար սահմանվում են էլեկտրաէներգիայի գնման նպաստավոր դրույքաչափեր:

Գործունեության նպատակն է «Չիչխան» ՓՎԷԿ-ի վերազինման միջոցով բարձրացնել «Չիչխան» ՓՎԷԿ-ի էներգետիկ արդյունավետությունը և էլեկտրաէներգիայի արտադրական ցուցանիշները:

Քանի որ վերանայվել է ՓՎԷԿ-ի կողմից օգտագործվող հաշվարկային ելքի քանակը, և բնապահպանական ելքի չափաքանակը Ընկերության կողմից նախկին՝ «Չիչխան» ՓՎԷԿ-ի հզորացման նախագծով իրականացվել են վերակառուցման աշխատանքներ: Զրոգտագործման թույլտվությամբ «Չիչխան» ՓՎԷԿ-ի հաշվարկային ելքը ավելացվել է առավելագույնը 1.3 խմ/վրկ ջրաքանակով /վարարաջրերի ժամանակ

ապրիլ-հունիս ամիսներ/, իսկ բնապահպանական ելքը գործող օրենսդրությամբ սահմանվել է ըստ ամիսների և նվազագույնը սահմանվել է 0.20խմ/վրկ /հունվար ամիս/, իսկ առավելագույնը՝ 0.96խմ/վրկ /ապրիլ ամիս/:

Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա կառուցված «Զիչխան» ՓԿԷԿ-ի ջրընդունիչ հանգույցը /խողովակաշարի մուտքամաս/ կահավորված է առցանց փոխանցմամբ ջրահաշվիչ (ջրաչափիչ) սարքավորումներով, որով հաշվառվում է խողովակաշարով դեպի ՀԷԿ-ի շենք տեղափոխվող հաշվարկային ելքի քանակը:

ՓԿԷԿ-ի հզորացման և վերազինման նպատակով նախատեսվել է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Վերակառուցել Զիչխան գետի Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա գոյություն ունեցող ջրընդունիչ կառուցվածքը,

- Կառուցել ջրընդունիչից սնվող նոր ճնշումային դերիվացիոն պողպատե խողովակաշար՝ 364 մ ընդհանուր երկարությամբ, որից 250 մ-ը 800մմ տրամագծի է, իսկ 114 մ-ը 900մմ տրամագծի,

- ՀԷԿ-ի գոյություն ունեցող շենքում տեղադրել նոր ժամանակակից ցուցանիշներով տուրբինային ագրեգատ՝ 600 կվտ հզորությամբ իր էլեկտրական միացումներով,

- Զրահեռացման համակարգի վերակառուցում և վերանորոգում:

Ընկերության կողմից վերակառուցվել է Զիչխան գետի Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա գոյություն ունեցող ջրընդունիչ կառուցվածքը: Կառուցվել է նոր ճնշումային դերիվացիոն պողպատե խողովակաշար՝ 364 մ ընդհանուր երկարությամբ, որից 250 մ-ը 800մմ տրամագծի է, իսկ 114 մ-ը 900մմ տրամագծի:

Ընկերության կողմից վերազինման նպատակով նախատեսվում է ՀԷԿ-ի շենքում տեղադրել նոր ժամանակակից ցուցանիշներով տուրբինային ագրեգատ՝ 600 կվտ հզորությամբ իր էլեկտրական միացումներով և վերակառուցել և հիմնանորոգել ՀԷԿ-ի շենքից հեռացվող ջրի համակարգը:

Նշված աշխատանքների իրականացման արդյունքում կբարձրանա «Զիչխան» ՓԿԷԿ-ի տնտեսական շահավետությունը և կավելանա էլեկտրաէներգիայի տարեկան արտադրողականությունը:

Ընկերությանը Շրջակա միջավայրի նախարարության կողմից տրված ջրօգտագործման թույլտվությունում ջրառի /H=1740.0մ/ և ջրահեռացման /H=1640.0մ/ կետերը տարբերվում են և չեն համապատասխանում "Զիչխան" ՓԿԷԿ-ի կառուցման նախկին նախագծով և փորձաքննական եզրակացությամբ տրված ջրառի և ջրահեռացման կետերին /1740.0-ի փոխարեն եղել է 1595.4մ է, իսկ ջրահեռացման նիշը՝ 1740.0մ-ի փոխարեն եղել է 1498.7մ/, ինչը նախագծում նախագծողի կողմից վրպակի պատճառով է եղել:

Նշված ցուցանիշների առկա անհամապատասխանությունը և շտկումը ևս առաջացրել նոր փորձաքննական եզրակացության ստացման անհրաժեշտություն: Նշված ցուցանիշները համապատասխանեցնելու վերաբերյալ պահանջ է եղել նաև ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման Նախագծում:



ՉԻՉԻԱՆ ՓՂԷԿ-Ի ԻՐԱԿԻՃԱԿԱՑԻՆ ՍԽԵՄԱ

## 2. ԵԼՔԱՅԻՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

### 2.1 Ֆիզիկաաշխարհագրական պայմանները

Նախատեսվող գործողության տարածքը գտնվում է Լոռու մարզում, Շիրակի լեռնաշղթայի ծայր հյուսիսարևմտյան հատվածում, հարում է Փամբակի լեռնաշղթային:

Շիրակի լեռնաշղթան, տեղակայված լինելով հանրապետության հյուսիս – արևմտյան մասում, սկիզբ է առնում Ախուրյանի հովտից և 33 կմ երկարությամբ ձգվում է արևմուտքից արևելք մինչև Փամբակ գետի Չիչխան վտակի ստորին հոսանքը: Լեռնաշղթայի միջին բարձրությունը կազմում է 2150 մ, իսկ բարձրագույն կետը Եզնասար լեռն է, որի բարձրությունը կազմում է 2556 մ:

Շիրակի լեռնաշղթան ծալքաբեկորավոր է, կազմված է կրաքարերից, պորֆիրիտներից, անդեզիտադացիտներից, տուֆակոնգլոմերատներից ու տուֆաբեկչիաններից: Տեկտոնական տեսակետից անտիկլինորիում է: Կառուցվածքային տեսակետից լանջերը անհամաչափ են. Հյուսիսային լանջերը մեղմաթեք են, իսկ



հարավային լանջերը զառիթափ, ունեն կտրտված էրոզիոն-դենուդացիոն մակերևույթներ, այստեղ լավ են արտահայտված սելավային երևույթները: 1900-ից 2000 մ բարձրությունների վրա առկա են հարթ մակերևույթներ: Ընդհանուր առմամբ բուսականությունը այստեղ տափաստանային է:

Տարածքը հարավային և արևելյան ցածրադիր նիշով սահմանափակվում է «Նալբանդի» ոռոգման ջրանցքով, արևմուտքից և հյուսիսից մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերով և համայնքային նշանակության արոտով:

Շահագործվող «Չիչխան» փոքր ՀԷԿ-ի տեղանքը գտնվում են Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում Լոռու մարզի սահմաններում, Շիրակամուտ համայնքի վարչական տարածքում՝ գյուղից 0.7 կմ հյուսիս-արևելք ուղղությամբ:

Քարտեզ 1: Շիրակամուտ համայնքի տեղադիրք



### 2.3 Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Լեռնագրական տեսակետից տարածաշրջանը հարում է Շիրակի, Բազումի և Փամբակի լեռնաշղթաներին: Բազումի լեռնաշղթան պատկանում է Փոքր Կովկասի Վիրահայոց- Ղարաբաղի լեռնահամակարգի (միաթեք աստիճանաձև բեկորային զոնա) ներքին լեռնաշղթաների թվին և 66կմ երկարությամբ ձգվում է Սեպասարի սարավանդից մինչև Փամբակ գետի Գայլաձոր կիրճը: Լեռնաշղթան ունի 2800մ միջին, 2992մ (Ուրասար) առավելագույն բարձրություն:

Դեպի Փամբակի հովիտ իջնող լանջերի կենտրոնական և արևելյան հատվածները ամբողջովին անտառապատ են, իսկ արևմտյան մասում՝ հատկապես Սպիտակի գոգավորություն իջնող լանջերը պատված են լեռնասևահողային



տափաստաններով, այդ պատճառով հյուսիսահայաց լանջերը քիչ են մասնատված: Հարավահայաց լանջերը պատված են տափաստանային բուսականությամբ: Արևմտյան հատվածում լանջերն իջնում են մեծ թեքությամբ և թաղվում Գեղանիստի լավաների տակ: Լավաների վրա ձևավորվել են լեռնային սևահողեր: Կենտրոնական մասում հիմնականում չորտափաստաններ են, հետևաբար տեղանքը խիստ մասնատված է:

Տարածքի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են մի շարք անդեզտաբազալտներ ու պորֆիրիտներ: Համաձայն կատարված ուսումնասիրությունների հետազոտվող տարածքում ծածկված են փոփոխական հզորությամբ այլովիալ և դեյուվիալ գոյացումներով:

Փամբակ գետի ավազանի տարածքի երկրաբանական կառուցվածքը բնութագրվում է էֆֆուզիվ նստվածքներով, տեղ-տեղ նաև ինտրուզիվ ապարներով, պլիոցեն և չորրորդական ապարներով: Գետի հունում զարգացած են այլովիալ-կոլյուվիալ նստվածքները, որոնց հզորությունը հասնում է մինչև 13մ:

Լանջերը զառիթափ են: Շրջանի գեոմորֆոլոգիական կառուցվածքը բնութագրվում է ճաքճաք, թույլ հրաբխածին-նստվածքային ապարներով:


Տարածքում գեոդինամիկ երևույթներ՝ սողանքներ, քարաթափեր չեն արձանագրվել: Սողանքների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

## **2.4 Տարածքի սեյսմիկ բնութագիրը**

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադինացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 3-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է  $500 \text{ սմ/վ}^2$  կամ  $0.5g$ :



մակարդակից բարձրությամբ: Մինչև 1400 մ գերիշխում է բարեխառն տաք, 1400-1700 մ՝ բարեխառն ցուրտ, իսկ 1700-ից բարձր՝ ցուրտ կլիման: Համաձայն ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանություն» նորմերի՝ ուսումնասիրվող տարածքը գտնվում է շինարարության համար «չափավոր» (Չ) կլիմայական շրջանում և բնութագրվում է տաք, խոնավ ամառներով և չափավոր ցուրտ ձմեռներով՝ թույլ քամիներով ու օպտիմալ խոնավությամբ :



Համաձայն ՀՀ տարածքի բնակավայրերի ցանկի՝ (ՀՀՇՆ II-7.01-2011, աղյուսակ-3.2) հետազոտվող տարածաշրջանը քարտեզի վրա ներկայացված է 40 համարով ( ●40 ): Ստորև ներկայացվում է շրջանի կլիմայական ցուցանիշները աղյուսակների տեսքով ըստ «Վանաձոր» և «Թումանյան» օթերևութաբանական կայանների տվյալներ (տես աղյուսակ 1.1-1.5)

*Օդի միջին ջերմաստիճանը*

*Աղյուսակ-1.1*



															20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
Վանաձոր	862.4	հունվար	4	3	10	7	4	13	49	10	20	3.1	2.2	13	22	24	25
			1.5	1.7	1.5	2.0	2.2	3.8	4.0	2.4							
		ապրիլ	7	7	23	12	5	9	27	10	23	2.3					
			1.5	1.9	1.6	2.2	1.3	2.7	2.3	1.2							
		հուլիս	10	17	43	21	2	1	3	3	22	1.9					
			1.9	1.9	1.8	2.1	1.6	1.8	1.7	1.5							
		հոկտեմբեր	6	9	28	18	4	5	20	10	37	1.6					
			1.3	1.3	1.3	1.7	1.4	1.8	1.9	1.3							

**Արևափայլի տևողությունը**

Աղյուսակ-1.5

Բնակավայրի օդերևութաբանական կայանի անվանումը	Տևողությունը ըստ ամիսների												Տարեկան գումարային
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
Վանաձոր	156	137	161	158	191	221	197	181	201	178	137	132	2050


**2.6 Մթնոլորտային օդ**

Վանաձոր քաղաքում օդային ավազանի աղտոտվածության մոնտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանությանն մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Վանաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 3 անշարժ դիտակայան և 24 շարժական դիտակետ: Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի տվյալների համաձայն (<http://armmonitoring.am/page/5>), Վանաձոր քաղաքում ազոտի երկօքսիդի և ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն: Որոշակի չնչին աճ նկատվել է կապված փոշու կոնցենտրացիայի հետ, որը կարող է պայմանավորված լինել տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինար Վանաձոր քաղաքում կատարվել են փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում է 24 դիտակետ և 3 դիտակայան: 2019




թվականին Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին տարեկան կոնցենտրացիան գերազանցել է ՍԹԿ-ն աննշան, միջին տարեկան կոնցենտրացիան կազմել է  $0.157 \text{ մգ/մ}^3$  (ՍԹԿ միջ.օր.= $0.15 \text{ մգ/մ}^3$ ), իսկ ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիանները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները: Իրականացված դիտարկումների 37%-ում դիտվել է փոշու, 25%-ում՝ ծծմբի երկօքսիդի, 3%-ում՝ ազոտի երկօքսիդի գերազանցումներ համապատասխան ՍԹԿ-ներից: Քաղաքում մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում արդյունաբերությունը և քաղաքաշինությունը:




Գրաֆիկ 6: Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունը

Նախորդ տարվա համեմատությամբ 1.4 անգամ բարձրացել է ազոտի երկօքսիդի կոնցենտրացիան, իսկ ծծմբի երկօքսիդի և փոշու կոնցենտրացիաները



Գրաֆիկ 7: Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունը



**Գրաֆիկ 8: Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունը**

Շիրակամուտ գյուղում չկան գործող արդյունաբերական կամ խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ: Մթնոլորտային օդի որակի մոնիթորինգ չի իրականացվում:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Աղյուսակ 12.

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ <sup>3</sup> )			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ըստ ուղեցույցի, մինչև 10 հազար բնակչությամբ բնակավայրերի համար, որոնց թվին է դասվում Շիրակամուտ համայնքը, օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշներն են՝

- Փոշի՝ 0.2 մգ/մ<sup>3</sup>;
- Ծծմբի երկօքսիդ՝ 0.02 մգ/մ<sup>3</sup>;
- Ազոտի երկօքսիդ՝ 0.008 մգ/մ<sup>3</sup>;
- Ածխածնի օքսիդ՝ 0.4 մգ/մ<sup>3</sup>:

## 2.6 Զրային ռեսուրսներ

Զրագրական տեսանկյունից առավել նշանակալի է դիտարկվող տարածքի մոտակայքով անցնող Չիչկան գետը, որը հանդիսանում է Փամբակ գետի վտակը և Նալբանդ ոռոգման ջրանցքը:

Փամբակ գետը սկիզբ է առնում Զաջուտի լեռնանցքի արևելյան լանջից, նրան միանալով՝ Չիչխան գետը ձգվում է 86 կմ, իսկ ջրհավաք ավազանը կազմում է 1370 կմ<sup>2</sup>: Փամբակը վերին հոսանքում հոսում է նեղ, աստիճանաբար լայնացող հովտով, այնուհետև միջին և ստորին հոսանքներում այն արագահոս է և ունի մեծ անկում:

Չիչկան /Չիչխան/ գետի երկարությունը 26 կմ է, իսկ ջրհավաք ավազանը կազմում է 184 կմ<sup>2</sup>: Սկիզբ է առնում Շիրակի լեռնաշղթայի հյուսիսային լանջից և հոսում է Շիրակի և Բազումի լեռնաշղթաների միջլեռնային հովտով: Վերին հոսանքում ափերը ցածրադիր են: Միջին հոսանքի շրջանում գետը մտնում է խոր ու նեղ ձորի մեջ և առաջացնում Թոչկան կամ Չիչխան ջրվեժը: Սնումը հիմնականում ձնաանձրևային է: Հորդում է գարնանը, պատահում են ամառային վարարումներ: Տարեկան ջրի միջին ծախսը 1.74 մ<sup>3</sup>/վրկ է:

Չիչխան գետի վերին հոսանքից սկիզբ է առնում Շիրակամուտի կամ Նալբանդի ջրանցքը, որը անցնում է նախ Շիրակամուտ համայնքով, այնուհետև Հարթագյուղով ձգվում մինչև Մեծ Պարնի համայնք: 1940-ին շահագործման հանձնված այս ջրանցքի երկարությունը կազմում է 88 կմ, ջրթողունակությունը 2 մ<sup>3</sup>/վ է, ոռոգում է հարակից համայնքները:

Շահագործվող «Չիչխան» ՓԷԿ-ի կառույցները գտնվում են Չիչխան գետի ձախ ափին: ՓԷԿ-ի ջրընդունիչը կառուցվել է Չիչխան գետի վրա կառուցված «Նալբանդ» ոռոգման ջրանցքի վրա: Ոռոգման ջրանցքի 7-րդ կմ հատվածում կառուցված ջրընդունիչից իրականացվում է փիէկ-ի ջրառը:

### Հիդրոլոգիա

Չիչխան գետը, որից սնվում է Նալբանդի ոռոգման ջրանցքը, ապահովված է հիմնականում գրունտային, անձրևային և ձնհալի ջրերով: Չիչխան գետի վրա ջրաչափական կետ չկա: Այդ իսկ պատճառով Նալբանդի ջրանցքի գլխամասում գոյություն ունեցող ջրընդունիչի ուղահատվածքում հոսքի տարեկան նորման և նրա ներտարեկան /ըստ ամիսների/ բաշխումը որոշվում է «Ресурсы поверхностных вод. Том 9, вып. 1, бассейн реки Кыры» ձեռնարկի հիման վրա:

Հաշվարկային տվյալները 50%, 75% և 95% ապիովվածության տարիների համար բերված են ստորև:

### Աղյուսակ . Հոսքի հաշվարկային տվյալները

Ապրոհվածության %	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	Միջին տարեկան մ <sup>3</sup> /վրկ
50	1.1	1.1	2.4	6.35	7.75	5.0	2.4	1.65	1.45	1.45	1.45	1.1	2.75
75	1.0	1.0	2.0	6.25	7.2	4.15	2.0	1.4	1.2	1.2	1.21	1.0	2.38
95	0.9	0.9	1.6	4.05	5.5	3.15	1.6	1.1	1.0	1.0	1.0	0.9	1.9

## 2.7 Հողեր

Շահագործվող «Զիչխան» ՓՀԷԿ-ի և հարակից տարածքներում հողային կազմը հիմնականում արտահայտված է լեռնատափաստանային խճաքարաշագանակավուն սևահողերով: Այստեղ հողի քարքարոտվածությունը 0-70 սմ խորություններում բարձր է և հասնում է 30 - 50%-ի: 0 - 20 սմ խորությունում հումուսի պարունակությունը տատանվում է 2-5%: Ըստ հողի մեխանիկական կազմի հումուսաակումուլյացիոն հորիզոնում մասնիկների պարունակությունը, որոնք 0,01 մմ-ից փոքր են, կազմում են 20 - 45%:

Ուսումնասիրվող տարածքի ընդհանուր էրոզացվածությունը մեծ է՝ 50% - ից բարձր, տարածքի մոտ 10 %-ը չէրոզացված է, թույլ էրոզացված է 21%-ը, միջին էրոզացված 45%-ը և շատ էրոզացված է 24%-ը:

## 2.8 Կենսաբազմազանություն

### 2.8.1 Բուսականություն

Շիրականուտ գյուղի մերձակայքում (Լոռու մարզ) կամ շահագործվող Զիչխան ՓՀԷԿ-ի հարակից տարածքները ներկայացված են տափաստանային և մարգագետնատափաստանային բուսականությամբ:

Այստեղ դոմինանտների դեր են կատարում Փետրախոտ նեղատերև (*Stipa tirsia*), Փետրախոտ գեղեցկագույն (*Stipa pulcherrima*) և Շյուղախոտ վալիսյան (*Festuca valesiaca*) տեսակները (Նկ. 1): Առանձին տեղերում ներկայացված են տրագականտային տափաստանների համակեցությունները՝ Գազ մանրագլխիկ (*Astragalus microcephalus*) տեսակի գերակշռությամբ (Նկ. 2): Առանձին տեղերում հայտնաբերվել են Սոճի Կոխի (*Pinus kochiana*) ծառատեսակի ներկայացուցիչները որոնք, հավանաբար, տարածվել են սերմերով (քամու միջոցով), նախկինում անտառապատված մոտակա հողամասերից: Տարածքները տեղական բնակչության կողմից օգտագործվում է որպես արոտավայր, արոտավայրի բեռի ինտենսիվությունը միջին-բարձր է, տեղ-տեղ նկատվում են քայքայված տարածքներ:



*Նկար 1: Տափաստրանային մաս*



*Նկար 2: Տրագականտրային համակեցություն*

Շիրականուտ գյուղի մերձակայքում և Չիչխան ՓՀԷԿ-ի կառույցների հարևանությամբ տարածքներում բացակայում են հազվագյուտ էկոհամակարգերը և Հայաստանի Կարմիր գրքում ընդգրկված բուսատեսակները:

### **2.8.2 Կենդանական աշխարհ**

Որպես ներկայացուցչական (ռեպրեզենտատիվ) խմբեր տարածքներում հանդիպում են բզեզների (Coleoptera) կարգի և ցերեկային թիթեռների (Lepidoptera: Rhopalocera) ենթակարգի ներկայացուցիչները: Տարածքի բզեզների և ցերեկային թիթեռների ֆաունան կարող է բնութագրվել որպես հիմնականում չորային լեռնատափաստանային, տեղամասի եզրային մասերում առկա են նաև եզակի անտառային տեսակներ:

Տարածքում չեն գրանցվել ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված անողնաշար կենդանիների որևէ խմբի պատկանող տեսակներ, սակայն այստեղ հանդիպում են մի



շարք նեղ տարածվածություն ունեցող բզեզներ և թիթեռներ, որոնք կարող են ունենալ որոշ բնապահպանական նշանակություն:

Դիտարկվող տարածքում Երկկենցաղներից (Amphibia) –գրանցվել է կանաչ դոդոշի (*Bufo variabilis* Pall.) մեկ առանձնյակ: Սողուններից (Reptilia) գրանցվել են երկու տեսակի մողեսներ. միջին մողեսը (*Lacerta media* Lantz&Cyr.) և գեղիրան օձագլուխը (*Ophisops elegans* Men.):

Թռչուններից (Aves) – Տարածքում և նրան անմիջապես հարող տեղամասերում դիտարկվել են հետևյալ թռչնատեսակները. դաշտային (*Alauda arvensis* L.) և անտառային (*Lullula arborea* L.) արտույտներ, անտառային ձիաթռչնակ (*Anthus trivialis* L.), սովորական քարաթռչնակ (*Oenanthe oenanthe* L.), ժուլան (*Lanius collurio* L.), մոխրագույն շահրիկ (*Sylvia communis* Latham), կանեփնուկ (*Linaria cannabina* L.) (գտնվել է նաև թռչունի բունը – Նկ. 6) և սովորական կկու (*Cuculus canorus* L.), ինչպես նաև սինաթրոպ տեսակներ՝ գյուղական (*Hirundo rustica* L.), տնային ճնճուկ (*Passer domesticus* L.), գորշ ագռավ (*Corvus corone* L.) և կաշաղակ (*Pica pica* L.): Գրանցվել են նաև գիշատիչ թռչուններ. սովորական հողմահար բազե (*Falco tinnunculus* L.) և տափաստանային ճուռակ (*Buteo rufinus* Cretzschmar.), որոնք օգտագործում են տարածքը որպես կերհանդակ:

Կաթնասուններ (Mammalia) – տարածքում հայտնաբերվել են սովորական դաշտամկան (*Microtus arvalis* Pall.) եզակի բներ: Գրանցվել է աղվեսը (*Vulpes vulpes alpherakyi* Satun.): Տարածքին հարող ճանապարհին գտնվել են շնագայլի (*Canis aureus* L.) հետքեր:

Չիչխան գետում հանդիպում են՝ կարմրախայտը *Salmo trutta fario*, արևելյան տառեխիկը *Alburnoides eichwaldii*, Կուրի բեղաձուկը *Barbus cyri*: Ձկնային տնտեսություններից այստեղ կարող է ներթափանցել ծիածանախայտը *Parasalmo mykiss*, արծաթափայլ կարասը *Carassius gibelio*:

Հիմնականում ֆաունայի տեսակները պատկանում են լեռնատափաստանային տարրերին, դոդոշը զարգանում է տարածքից դուրս, որևէ գերխոնավ բիոտոպում: Թռչունների որոշ տեսակները հանդիսանում են սինանթրոպ՝ կապված մոտակա բնակավայրերի հետ: Տարածքի մոտակայքում գրանցվել է ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված թռչունների մեկ տեսակ՝ Գիշանգը *Neophron percnopterus* Linnaeus:

## 2.9. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանը, որտեղ կառուցված է նաև Չիչխան ՓՀԷԿ-ը, ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում և չի առնչվում դրանց հետ: Լոռու մարզում և հարակից տարածքներում գտնվում է՝ Կովկասյան մրտավարդենու, Մարգահովիտի և Գյուլաքարակի սոճու պետական արգելավայրերը, ինչպես նաև «Դիլիջան» ազգային պարկը:

Մարգահովիտի պետական արգելավայրը, որը կազմավորվել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1971թ.-ի ապրիլի 4-ի թիվ 212 կարգադրությամբ, ունի 3368 հեկտար տարածք, գտնվում է Աղստև գետի ավազանում՝ Մարգահովիտ գյուղից դեպի Փամբակի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին ընկած տարածքում՝ ծովի մակարդակից 1900- 2200 մ բարձրություններում: Կառավարող կազմակերպությունը՝ «Հայանտառ» ՊՈԱԿ: Ստեղծվել է խոնավասեր անտառների և դրանց բնորոշ կենդանական աշխարհի (այծյամ, գորշ արջ, կովկասյան մայրեհավ և այլն) պահպանության նպատակով:

Կովկասյան մրտավարդենու արգելավայրը հիմնադրվել է 1959 թ.-ին, զբաղեցնում է 1000 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Փամբակի և Ծաղկունյաց լեռնաշղթաների լանջերին, ծովի մակարդակից 1900-2200 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ ռելիկտային Մրտավարդ կովկասյան տեսակի թփուտները:

Գյուլագարակի սոճու արգելավայրը հիմնադրվել է 1958 թ.-ին, զբաղեցնում է 2576 հա տարածք, գտնվում է ՀՀ Լոռու մարզում, Լոռու գոգավորությունը եզրավորող Բազումի լեռնաշղթայի հյուսիսահայաց լանջերին, 1400-1900 մ բարձրության վրա: Պահպանության օբյեկտներն են՝ եզակի ռելիկտային սոճու անտառները:

«Դիլիջան» ազգային պարկը զբաղեցնում է 33765 հա տարածք: Գտնվում է Տավուշի մարզում, Փամբակի, Արեգունու, Միափորի, Գուգարաց լեռնաշղթաների լանջերին, Աղստև և Գետիկ գետերի ավազաններում: Գտնվում է ծովի մակարդակից 1070-2400 մ բարձրության վրա: Այստեղ պահպանվում են կովկասյան տիպի մեզոֆիլ անտառները, հաճարենու և կաղնու համակերտությունները, կենու եզակի պուրակը: Ազգային պարկի տարածքով հոսում են Աղստև գետը և դրա հիմնական վտակները՝ Հովաջուրը, Շտողանաջուրը, Բլդանը, Հաղարծինը, Գետիկը: Ազգային պարկում գտնվում են Պարզ և Տգրկալիճը:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են հանդիսանում նաև բնության հուշարձանները: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ: ՀՀ Լոռու մարզում և գործունեության տարածքին համեմատաբար մոտ գտնվող և հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև, աղյուսակում:

Հ/Հ	Անվանումը	Տեղադիրքը
1	2	3
2	«Գետնանձավ» անձավային թունել	Լոռի Բերդ գյուղից 2 կմ հվ-արլ, Ձորագետի ձախ ափին, հունից 40 մ բարձրության վրա
3	«Ձորագետի հրային ներժայթույկ»	Ձորագետ և Փամբակ գետերի հատման կետում, Ալավերդի-Վանաձոր ավտոմայրուղու աջ կողմում՝ մոտ 10 մ չհասած առաջին թունելի մուտք
	«Թռչկան» ջրվեժ	Մեծ Պառնի գյուղական համայնք, Չիչխան գետի աջակողմյան Թռչկան վտակի վրա

4	«Տրավերտիններ դոլերիտային բազալտներում»	Մարց գյուղի խաչմերուկից մոտ 50 մ վերև, Մարց-Աթան գրունտային ավտոճանապարհի ձախ կողմում
5	«Շամլուղի լճակ» ջրագրական	Ցանկում նշված չէ
6	«Դսեղի Ծովեր» լիճ	Դսեղ գյուղից 3 կմ արևելք-հարավ-արևելք, Սևորդաց լեռնաշղթայի Ծովիղաշ լեռնագագաթի հյուսիսային լանջի արևմտյան զոգավորությունում
9	«Քոչաքարի մրտավարդ»	Մարզահովիտ գյուղական համայնքի հյուսիսային սահմանագծից մոտ 1 կմ հեռավորության վրա, Գուգարքի անտառոտնտեսության Եղեգնուտի անտառապետության բարձրադիր գոտում
10	«Բազալտանման ապարների (Դիաբազների) զոլավոր դայք» երկրաբանական,	Ցանկում նշված չէ
11	«Օձի պորտ» բնապատմական հուշարձան	Ցանկում նշված չէ

Տեղամասին ամենամոտ գտնվող հուշարձանը «Թռչկան» ջրվեժն է, որը գտնվում է գործունեության տարածքից մոտ 2000մ հեռավորության վրա հուշարձանի պահպանության գոտին հաստատված է:

«Բազալտանման ապարների (Դիաբազների) զոլավոր դայք» երկրաբանական, և «Օձի պորտ» բնապատմական հուշարձանները (հիմք՝ ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում) և «Թռչկան ջրվեժ» բնության հուշարձանը ցանկում կրկնվում է՝ ուղղել:

## 2.10 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

Շիրակամուտը գտնվում է Լոռու մարզում, Սպիտակի նախկին շրջանի վարչական տարածքում՝ Փամբակ գետի վերին հովտում: Այն սահմանակից է Գեղասար, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Գուգարան գյուղերին: Այստեղով է անցնում Վանաձոր-Գյումրի խճուղային ճանապարհը և երկաթգիծը՝ Նալբանդ կայարանով: Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1670մ, վարչական տարածքը կազմում է 2922հա, որից գյուղի բնակատեղը՝ 140հա: Տարվա եղանակներից անհամեմատ լավն է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է, գարունը սովորաբար ուշացած է գալիս, իսկ ամառը տաք է՝ հաճախակի քամիներով:

Տարեկան տեղումները քիչ են, իսկ վերջին տարիներին նկատվում է, որ ձյուն քիչ է գալիս: Լինում է նաև կարկտահարություն:

Գյուղը գտնվում է ուժեղ սեյսմիկ գոտում, հաճախակի են լինում երկրաշարժերը: Հիշարժան են 1926թ. եւ 1988թ. երկրաշարժերը: Վերջինիս էպիկենտրոնը Շիրակամուտ-Նալբանդ գյուղն էր:

Գյուղատնտեսության համար պիտանի հողատեսքերը շատ են սուղ, ցածր է նրանց բերրիությունը: Եթե անձրևային տարիներին որոշ չափով դեռ կարելի է բերք հավաքել, ապա երաշտի տարիներին, ինչպես նաև կարկտահարության հետևանքով, գյուղացին կորցնում է բերքի 50-60%-ը: Հողագործության մեջ գյուղացին հիմնականում զբաղվում է կարտոֆիլի, կաղամբի, առանձին բանջարա-բոստանային մշակաբույսերի, ցորենի, գարու, առվույտի, կորնգանի, միամյա խոտաբույսերի արտադրությամբ: Անասնապահությամբ զբաղվում է ազգաբնակչության շուրջ 50-55%-ը: Դժվարություններ կան արոտավայրերի և մսուրային շրջանի համար անասնակերերի կուտակման գործում: Վատ է խտացրած կերերի արտադրությունը: Առանձին տնտեսություններ զբաղվում են մեղվապահությամբ: Յածր է թռչնաբուծությունը: Անտառհիմնման ծրագրեր են իրականացվում Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի Շիրակամուտ համայնքին պատկանող 90 հա տարածքներում, որի արդյունքում տարիներ հետո նախանշված համայնքները կունենան համայնքային անտառներ:

Նշված համայնքներում անտառի հիմնումը բնապահպանական բազմաթիվ օգուտներից բացի ունի մի շարք սոցիալական, կրթական բաղադրիչներ, որոնք ոչ պակաս կարևոր են համայնքների հարատև զարգացման համար: Ծրագիրը հնարավորություն կտա մշտական և ժամանակավոր աշխատանքով ապահովել նշված և հարակից համայնքների բակիչների:

### **3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

«Զիչխան» փոքր ՀԷԿ-ի շինարարությունը ձեռնարկվել է 2006 թվականին թիվ 0214 «էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի» և ԲՓ 80 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն հիման վրա, որը ” «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը 2006թվականի հուլիսի 25-ին տրվել է Զիչխան” ՓՀԷԿ-ի կառուցման համար:

”Զիչխան” ՓԿԷԿ-ի կառույցները ներառում են՝

- Ջրընդունիչ հանգույց
- Ճնշումային խողովակաշար
- ՀԷԿ-ի շենք:

Ջրընդունիչի մուտքամասում տեղադրված է մետաղական ճաղաշար, իրականացվել է ձկնապաշտպան կառույցներ: Կայանային հանգույցի տարածքը բարեկարգվել և կանաչապատվել է: ՀԷԿ-ի շենքն ապահովված է աշխատողների կենցաղային կարիքներն ապահովող սանիտարական հարմարանքներով / ջրամատակարարում և ջրահեռացում/:

ՓՀԷԿ-ի շենքը տեղակայված է Զիչխան գետի ձախ ափում: ՀԷԿ-ի շենքում ջուրն օգտագործվելուց հետո վերադարձվում է Զիչխան գետ գետ՝ առանց որակի և քանակի

փոփոխության: ՀԷԿ-ի աշխատանքը չի խոչընդոտում այլ նպատակներով ջրասպառման և ջրօգտագործողների ռեժիմները:

”Չիչխան” ՓԿԷԿ-ի կառուցման նախկին նախագծով և փորձաքննական եզրակացությամբ տրված ջրառի և ջրահեռացման կետերը նախագծողի կողմից վրայակի պատճառով տարբերվում են և չեն համապատասխանում Ընկերությանը Շրջակա միջավայրի նախարարության կողմից ջրօգտագործման թույլտվությունում տրված ջրառի /H=1740.0մ/ և ջրահեռացման /H=1640.0մ/ կետերին: Ջրառի նիշը 1740.0-ի փոխարեն նախագծում եղել է 1595.4մ է, իսկ ջրահեռացման նիշը՝ 1640.0մ-ի փոխարեն եղել է 1498.7մ: Նշվածի համար հիմք է հանդիսացել Նախագծային կազմակերպության գրությունը:

Տեղում Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից համապատասխան տեխնիկական միջոցների օգնությամբ նիշերը ճշտելուց հետո, 2013 թվականին ընկերությանը ճշտված նիշերով տրվել է ջրօգտագործման թույլտվություն: Ընկերության կողմից վերանայվել է նաև ՓՀԷԿ-ի կողմից օգտագործվող հաշվարկային ելքի քանակը և բնապահպանական ելքի չափաքանակը և «Չիչխան» ՓՀԷԿ-ի հաշվարկային ելքը ավելացվել է /վարարաջրերի ժամանակ ապրիլ-հունիս ամիսներ/ առավելագույնը 1.3 խմ/վրկ ջրաքանակով, ինչը սահմանվել է Ընկերությանը տրված ջրօգտագործման թույլտվությամբ:

Ելնելով նշվածից ընկերության կողմից անհրաժեշտություն է առաջացել վերանայել և շտկել նախկին նախագծով և փորձաքննական եզրակացությունում տրված ջրառի և ջրահեռացման նիշերը՝ համապատասխանեցնելով դրանք փաստացի և ՋԹ-ով տրված ցուցանիշների հետ: Նոր փորձաքննական եզրակացություն ստացման վերաբերյալ պահանջ է եղել նաև ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից՝ որոշման նախագծում:

Նշված պահանջը հանդիսանում է 2021թվականի մայիսի 25-ին տրված է թիվ 0210-2 ջրօգտագործման թույլտվություն Ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս հանդիսացող պայմանների 4. Կետը:

Ելնելով ՀՀ օրենսդրական պահանջներից ”Չիչխան” ՓՀԷԿ-ի վերազինման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը օրենքով սահմանված կարգով ներկայացվել է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության՝ նոր փորձաքննական եզրակացություն ստանալու համար՝ նպատակ ունենալով ցուցանիշների առկա անհամապատասխանությունը շտկելու:

«Չիչխան» ՓՀԷԿ-ի հզորացման և վերազինման համար ընկերությունը ձեռնարկել և իրականացրել էլ հետևյալ աշխատանքները.

- Վերակառուցել է Չիչխան գետի Նալբանդ ոռոգման ջրանցքի վրա գոյություն ունեցող ջրընդունիչ կառուցվածքը,
- Կառուցվել է ջրընդունիչից սնվող նոր ճնշումային դերիվացիոն պողպատե խողովակաշար՝ 364 մ ընդհանուր երկարությամբ, որից 250 մ-ը 800մմ տրամագծի է, իսկ 114 մ-ը 900մմ տրամագծի:

Ընկերության կողմից վերազինման նպատակով նախատեսվում է



- ՀԷԿ-ի գոյություն ունեցող շենքում տեղադրել նոր ժամանակակից ցուցանիշներով տուրբինային ագրեգատ՝ 600 կվտ հզորությամբ իր էլեկտրական միացումներով: Տուրբինային ագրեգատը կազմված է՝

a. հիդրոտուրբին N3, մակնիշը՝ ՇՇ100-47-65, արտադրության տարին՝ 2011

b. գեներատոր N3, մակնիշը՝ АГ 600.400.50.S.10

- Վերակառուցել և վերանորոգել ՀԷԿ-ի կողմից օգտագործված ջրի հեռացման համակարգը:

ՀԷԿ-ի շենքը կառուցված է Հայաստանի Հանրապետությունում ներկայումս գործող շինարարական նորմերին ու կանոններին համապատասխան: Կայանային հանգույցը բարեկարգված և կանաչապատված է պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով: Լրացուցիչ նախատեսված է ծառեր տնկել կայանային հանգույցին մոտեցնող ճանապարհի երկայնքով՝ հիմնականում բարդի ծառատեսակով:

”Չիչխան” ՓՀԷԿ-ի հզորացման և վերազինման արդյունքում ՓՀԷԿ-ի շենքում 3 ագրեգատների միջոցով կապահովվի 1500 Կվտ դրվածքային հզորության ստացումը:

#### **4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ**

Շինարարական աշխատանքները շատ փոքրածավալ են և կարծաժամկետ և ներառում են

c. ՀԷԿ-ի գոյություն ունեցող շենքում տեղադրել նոր ժամանակակից ցուցանիշներով տուրբինային ագրեգատ՝ 600 կվտ հզորությամբ իր էլեկտրական միացումներով,

d. Վերակառուցել և վերանորոգել ՀԷԿ-ի կողմից օգտագործված ջրի հեռացման համակարգը՝ վերականգնելով քանդված և վնասված մասերը:

Նշված աշխատանքների համար հողային աշխատանքների իրականացում և շինտեխնիկայի օգտագործում չի նախատեսվում և դրա հեռ կապված դիզվառնիքի այրման արգասիքներ և փոշի չի առաջանա:

Աշխատանքները նախատեսվում է իրականացնել տաս օրում և ներառում են միայն բետոնային աշխատանքներ: Բետոնը կբերվի համապատասխան մասնագիտացված արտադրական հանգույցից պատրաստի վիճակում և առանց տարածքում կուտակելու կօգտագործվի ջրհեռացնող համակարգի վերանորոգման համար: Շինարարության ընթացքում շինանյութերը պահեստավորում չի նախատեսվում Աշխատանքների իրականացման արդյունքում հեռացման ենթակա թափոններ և շինարարական աղբ չեն առաջանա:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը նախատեսված է օգտագործել բանվորների և վարորդների կենցաղային-տնտեսական կարիքների ապահովման համար:

Շինարարական աշխատանքները իրականացվելու են արդեն իսկ կառուցապատված, «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքում, որտեղ բացակայում է բուսածածկը և հատման ենթակա ծառերը:

Քանի որ աշխատանքների ժամանակ նոր հողատարածքներ չեն օգտագործվում, հետևաբար հողային ռեսուրսներին և կենսաբազմազանությանը վնաս չի հասցվի: Աշխատանքների ժամանակ ջրային ռեսուրսների վրա ազդեցություն ևս չի կանխատեսվում:

Նախատեսվող վերազինման աշխատանքները բնական միջավայրի, կամ էկոլոգիական որևէ գործոնի վրա որևէ ազդեցություն չեն ունենա:

ՀԷԿ-ի շենքի վերակառուցման և վերազինման աշխատանքների ավարտից հետո, կայանային հանգույցի այն հատվածները, որտեղ բացակայում է կանաչ գոտին իրականացվելու է կանաչապատման լրացման աշխատանքներ՝ չնայած այն հանգամանքին, որ կանաչապատման աշխատանքները կայանային հանգույցի տարածքում բավարար իրականացվել են: Հարակից տարածքները սեփականության իրավունքով պատկանում են «Լեռ և ջուր» ՍՊ ընկերությանը, որտեղ նույնպես իրականացվել է կանաչապատում պտղատու և դեկորատիվ ծառատեսակներով: Լրացուցիչ նախատեսված է ծառեր տնկել կայանային հանգույցին մոտեցնող ճանապարհի երկայնքով՝ հիմնականում բարդի ծառատեսակով՝ թվով 20 հատ:

Ընկերության կողմից մշտապես իրականացվում է տեսողական զննում և մոնիթորինգ ծառերի կաչողականության վերաբերյալ՝ նպատակ ունենալով ոչ կենսունակ ծառերը փոխարինել նորերով:

#### **4.1 Արտադրության սանիտարիան, արտադրատեխնիկական կազմակերպական կառուցվածքը և աշխատողների անվտանգությունը**

«Զիչխան» ՓՀԷԿ-ը արդեն շահագործվում է 13 տարի: ”Զիչխան” ՓՀԷԿ-ի շենքում գործող և տեղակայվելիք հիդրոագրեգատները ունեն ավտոմատ կարգավորման և ղեկավարման համակարգ: Ղեկավարման, ավտոմատացման և հսկողության կայանային սարքավորումները ապահովում են կայանի նորմալ աշխատանքը ավտոմատ ռեժիմով:

Հիդրոկայանի ղեկավարման բոլոր վահանակների համար գոյություն ունի և նախատեսվում է առանձին տեղամաս ՀԷԿ-ի շենքի ներսում: Տուրբինային փականները նույնպես տեղավորվում են շենքի մեջ: ՀԷԿ-ը շահագործվում և շարունակվելու է շահագործվել պատվիրատուի «Լեռ և ջուր») կողմից: Շահագործող անձնակազմը ապահովված է բջջային հեռախոսային կապով որի միջոցով կապ է հաստատվում

շրջանային շահագործող ծառայության միջև: Շահագործող անձնակազմի համար շենքի օպերատորի սենյակում տեղակայվելու է կայանի դիսպետչերական վահանակը:

Կայանային հանգույցի տարածքը կանաչապատված և բարեկարգված է: Տարածքում առկա կանաչապատ ծառաշերտը սանիտարապաշտպան գոտու դեր է տանում և պահում է ագրեգատների աղմուկի տարածումը շրջակա տարածքներ և մոտակա բնակելի կամ հանրային տարածքներ: Բացի այդ հիդրոագրեգատների տեխնիկական վերազինումը նպաստում է ՀԷԿ-ի շահագործման փուլում աղմուկի, ինչպես նաև թրթռման մակարդակի նվազեցմանը: Տեղադրվող ագրեգատը տեխնիկական պարամետրերով ավելի արդիական է և դրա պարամետրերը բնապահպանական և աշխատողների սանիտարական նորմերի ապահովման տեսանկյունից բնութագրվում են նվազ ազդեցությամբ: Ագրեգատների տեխնիկական բնութագրի համաձայն տրանսֆորմատորային յուղի հետ շփումը բացառվում է, իսկ աղմուկի մակարդակը բնութագրվում է ցածր ցուցանիշով: Անմիջական արտադրական պրոցեսում ներգրավված են 5 (հինգ) մասնագետներ որոնք ՀԷԿ-ի շահագործման օրվանից աշխատում են, ձեռք են բերել մեծ փորձառություն և պարբերաբար կատարվում են վերապատրաստումներ հիդրոագրեգատ արտադրող կազմակերպության մասնագետների կողմից:

Աշխատողների անվտանգության ապահովման միջոցառումներից կարևորվում են հետևյալները.

- Կայանային հանգույցի տարածքում աշխատատեղի հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրդեհային միջոցները,
- աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով /ինչն արդեն կա ՀԷԿ-ի շենքում/,
- աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով,
- աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում,
- պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկա-տրանսպորտային միջոցների շարժիչները /շահագործման փուլում՝ ագրեգատների տեխնիկական վիճակը/, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, կամ փոխարինում,
- Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում /բետոնապատ/, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ շրջակա տարածքներ,
- Իրականացնել հիդրոագրեգատների աղմուկի և թրթռման մակարդակների չափումներ,
- բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ:

‘Չիչխան’ ՓՀԷԿ-ում նախատեսվող վերազինման արդյունքում արտադրված էլեկտրական էներգիան նույնպես օրենքի սահմանված կարգով կվաճառվի “ՀՀ էլեկտրական ցանցեր” ՊՓԲ ընկերությանը:

#### 4.2. Ջրային ռեսուրսների պահպանություն

Չիչխան գետը տիպիկ լեռնային է, ինչպես տարվա, այնպես էլ բազմամյա կտրվածքով ունի չափազանց անհավասարաչափ ելքեր:

Գետի հաշվարկային հոսքերի հիման վրա կատարվել է տեխնիկատնտեսական հաշվարկ և ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունից ստացվել է թիվ 02 10-2 /տրվ. 25.05.2021թ ջրօգտագործման թույլտվություն:

Շահագործման փուլում, ջրային ռեսուրսների պահպանման հիմնական միջոցառում է հանդիսանում Չիչխան գետում բնապահպանական թողքի ապահովումը, որը գործող օրենսդրությամբ սահմանվել է ըստ ամիսների և նվազագույնը սահմանվել է 0.20խմ/վրկ /հունվար ամիս/, իսկ առավելագույնը՝ 0.96խմ/վրկ /ապրիլ ամիս/ և սահմանված է նաև ջրօտագործման թույլտվությամբ: Անկախ ջրապահանջից, այդ ելքը միշտ պետք է առկա լինեն գետի հունում, ապահովելու համար գետի ստորին հոսանքներում ջրային էկոհամակարգի կայունությունը տարվա բոլոր սեզոններին:

Շինարարական աղբի ժամանակավոր տեղադրումը պետք է իրականացվի գետի ջրատարածությունից դուրս՝ բացառելով աղբի թափանցումը դեպի գետ բարձր վարարային հորիզոնների ժամանակ:

Շահագործման փուլում աղբի կուտակումը պետք է կազմակերպվի գետի ջրատարածքից դուրս, համապատասխան տեղում:

### **5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ՆՎԱՁԵՑՄԱՆՆ ՌԻՂԴՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

- Շահագործման փուլում պահպանել շինարարական և սանիտարական նորմերը և կանոնները;
- շինարարության ժամանակ բետոնային աշխատանքները կատարել հաշվի առնելով հիդրոկարբոնատային ագրեսիվությունից անհրաժեշտ պաշտպանիչ տեխնոլոգիաների և նյութերի օգտագործումը;
- համեմատաբար ջրառատ տարիների հորդացման սեզոնին իրականացնել բնապահպանական հունավացման և ՓՀԷԿ-ից ներքև ընկած գետահովտի խոնավացման համար հնարավորին մեծ ջրթողքեր,
- իօգտագործված քայուղերը և տրանսֆորմատորային յուղերը հավաքել և պահել հատուկ տարաներում և հանձնել լիցենզիա ունեցող կազմակերպություններին,
- շինարարական աշխատանքների ընթացքում և շահագործման փուլում պահպանել անվտանգության և հակահրդեհային միջոցառումները /ապահովել

կրակմարիչի առկայություն, տեղադրելով հրշեջ հիդրանտ և ապահովելով ջրաքանակ/,

- աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրդեհային միջոցները,
- աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով,
- պարբերաբար պետք է կարգաբերվեն շահագործման փուլում՝ ագրեգատների տեխնիկական վիճակը, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, վերազինում, կամ փոխարինում,
- Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պայմաններում՝ ապահովված բետոնյա կամ անջրանցիկ հատակով, ինչը կբացառի անձրևաջրերի հետ դրանց տարածումը շրջակա տարածքներ,
- Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ շրջակա տարածքներ,
- բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ:
- շինարարական աշխատանքների իրականացման, ինչպես նաև ՓՀԷԿ-ի շահագործման համար ներառվեն տեղի բնակիչները, ինչը կնպաստի նրանց կենսամակարդակի բարձրացմանը,
  - “Լեռ և ջուր” ՍՊԸ կմասնակցի համայնքների առավել անհետաձգելի սոցիալական խնդիրների լուծման միջոցառումներին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ Հավելված 1

Գործողությունները	Հնարավոր ազդեցությունը	Նվազեցնող միջոցառումները	Նվազեցման ցուցանիշը
<i>Շինարարության փուլ</i>			
Փոքրածավալ բետոնային աշխատանքներ	Հողային ծածկույթին հասցվող վնաս	Բետոնը բերել պատրաստի վիճակում և առանց պահեստավորման օգտագործել	
Շինարարական տեխնիկայի սպասարկում	- Հողերի և ջրերի աղտոտում տեխնիկայի սպասարկման արդյունքում առաջացող յողերի պատճառով	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս կամ գետից առավելագույն հեռավորության վրա - Տեխնիկական միջոցների լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս	- Բացառվում է մեքենաների լվացման ջրերի արտահոսքը դեպի ջրային ռեսուրսներ - Չկան վառելիքի և նավթամթերքի արտահոսքեր - Շինհրապարակում առկա են հակահրդեհային հիմնական միջոցները
Վառելիքաքսուկային կամ այլ նյութերի արտահոսք		Վառելիքաքսուկային և այլ նյութերի արտահոսքի վերահսկման միջոցառումների իրականացում, ինչպիսիք են՝ նավթը, քսայուղերը, տարբեր տեսակի վառելանյութերը, տրանսֆորմատորային յուղը, բռնկուն և քայքայվող նյութերը: Քսայուղերը պետք է հավաքվեն և պահվեն հատուկ տարաներում:	
ՀԷԿ-ի կողմից օգտագործված ջրի հեռացման համակարգի վերակառուցում և վերանորոգում	Հարակից տարածքների վրա ազդեցություն վրա	Ժամանակավոր խախտված տարածքների վերականգնում	Վերականգնված տարածքներ
Շինանարական աղբի առաջացում	- Հողերի, մակերեսային և ստորգետնյա ջրերի աղտոտում	- Շինարարական թափոնների ժամանակավոր պահեստավորում հատուկ սահմանված վայրում, - Սահմանված ժամանակ տեղափոխել թափոնները պաշտոնապես հատկացված վայր	- Շինաղբը գտնվում է միայն հատուկ հատկացված վայրում - Շինաղբի լրացուցիչ քանակներ չեն պահվում շինհրապարակում -

Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ դժբախտ պատահարներ շինհրապարակում	և - Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	- Ստուգման ընթացքում անձնակազմը ապահովված էր արտահագուստով և անձնական միջոցներով - Ստուգման ընթացքում չեն հայտնաբերվել խախտումներ
--------------------------	--	---	--

*ՀԷԿ-ի շահագործման փուլ*

Ջրառ	Ձկնապաշտպան կառույցների և ձկնանցարանի ապահովման արդյունավետություն	և Ջրընտունիչ հանգույցի կարգաբերում, անհրաժեշտության դեպքում վնասված մասերի նորոգում, կամ փոխարինում այլ մասերով, օգտագործվող ջրաքանակի հաշվառում	Մշտապես վերահսկել գլխամասային հանգույցի և ձկնանցարանի աշխատանքի համապատասխանությունը Մշտապես վերահսկել գլխամասային հանգույցի աշխատանքը
------	--	---	--

<p>ՀԷԿ-ի շենքի տարածք</p> <p>Տրանսֆորմատորային ենթակայան</p> <p>ՀԷԿ-ը սպասարկող անձնակազմի աշխատանքի անվտանգություն և սոցիալական պայմանների ապահովման միջոցառումները</p>	<p>տնկված ծառերի կայունության ստուգումը և անհրաժեշտության դեպքում նոր ծառերի տնկումը:</p> <p>Արտահոսված յուղերով տարածքների աղտոտում</p>	<p>Խնամքի միջոցառումներ</p> <p>Յուղահավաք համակարգի կառուցվածքները ստուգել</p> <p>Աշխատատեղերում հասանելի վայրում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկները և հակահրդեհային միջոցները, աշխատակազմը պետք է ապահովված լինի խմելու ջրի և զուգարանների հասանելիության պայմաններով, ինչպես նաև սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններով /ինչն արդեն կա ՀԷԿ-ի շենքում/, աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական</p>	<p>Մշտապես իրականացնել արտաքին զննում, անհրաժեշտության դեպքում ձեռնարկել միջոցներ</p>
--	--	--	---




		<p>անվտանգության անհրաժեշտ միջոցներով, աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում, պարբերաբար պետք է կարգաբերվեն տեխնիկատրանսպորտային միջոցների շարժիչները /շահագործման փուլում՝ ագրեգատների տեխնիկական վիճակը/, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնել վերանորոգում, կամ փոխարինում, Վառելիքը և քսայուղերը, իսկ շահագործման փուլում տրանսֆորմատորային յուղը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ շրջակա տարածքներ, Իրականացնել հիդրոագրեգատների աղմուկի և թրթռման մակարդակների չափումներ, բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ:</p>	
--	--	--	--

Առանձնացված բնապահպանական ծախսերը կկազմեն 320.0 հազ.դրամ

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ (ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ) ԾՐԱԳԻՐ Հավելված 2

	Վերահսկվող տեղամասը կամ միջավայրը	Վերահսկման առարկան կամ միջոցառումը	Վերահսկման եղանակը	Վերահսկման պարբերականությունը
Շինարարության փուլ				
2	Չիչխան գետ	Գետի աղտոտման վտանգ	Արտաքին զննում	Օրական
3	Շինարարական տեղամասի նախապատրաստում	Ջրի աղտոտան վտանգ	Բացառել նավթանյութերի հեռացնելը գետ	Հատումների ամբողջ ընթացքում
ՀԷԿ-ի շահագործման փուլ				
4	Ջրառ	-Օգտագործվող ջրի համար չափիչ սարքերի տեղադրում -Ջրի ազատ հոսք գետի հունով	- Ձկնուղու արտաքին զննում -Ճաղավանդակների ստուգում և մաքրում	Օրական  Օրական
5	Կայանայիննհանգույցի տարածք	Ծառերի և նոր տնկարկների պահպանություն	Արտաքին զննում	Օրական
	Տրանսֆորմատորային ենթակայան	Ջրի և շրջակա տարածքների աղտոտում	Արտաքին զննում	Օրական

### Հավելված 3



Տրանսֆորմատորի տակ յուղորսիչ համակարգի տեղադրման սխեմա

### Օգտագործված գրականության ցանկ

### Հավելված 4

1. Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ՝ «Վերականգնվող էներգետիկայի ծրագիր». ՀՀ փոքր հիդրոէլեկտրական կայանների գոյություն ունեցող սխեմայի նորացում (GEF-CS-4/2006). Վերջնական հաշվետվություն
2. «Հայաստանի ազգային ատլաս» Հատոր Ա «Գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն» ՊՈԱԿ, Երևան, 2007թ  
2. Քարտեզագրական նյութ՝ հատուկ պահպանվող տարածքներով
3. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (27.11.2006թ.),

4. Բուսական աշխարհի մասին ՀՀ օրենքը, 1998թ.
5. Կենդանական աշխարհի մասին ՀՀ օրենքը, 2000թ.
6. ՀՀ հողային օրենսգիրք, 2001թ.
7. Բնապահպանական կրթության մասին ՀՀ օրենք, 2001թ.
8. ՀՀ ջրային օրենսգիրք, 2002թ.
9. Թափոնների մասին ՀՀ օրենքը, 2004թ.
10. Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք, 2005թ.
11. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (09.08.2014թ.) ,
12. Քարտեզագրական նյութ՝ հատուկ պահպանվող տարածքներով
13. ՀՀ Կարմիր գիրք « Բույսեր», 2010թ.
14. ՀՀ Կարմիր գիրք «Կենդանիներ», 2010թ.
15. ՀՀ կառավարության 31.07.2014 թվականի N 781 որոշումը,
16. «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.09.2008թ.-ի N 967-Ն որոշում,
17. «Փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և շահագործման համար շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման չափորոշիչներին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության 2018թ. մարտի 1-ի արձանագրային որոշումը:  
 14 ՀՀ կառավարության 2018թ. հունվարի 25-ի N 57-Ն որոշում
- 15, ՀՀ կառավարության 2017թ. փետրվարի 11-ի N 1404-Ն որոշում  
 «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը
- 15 ՀՀ կառավարության «ՋՐԱԷԿՈՎԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՀՈՍՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ, ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՋՐԱՊԱՀՊԱՆ, ԷԿՈՏՈՆԻ ԵՎ ԱՆՕՏԱՐԵԼԻ ԳՈՏԻՆԵՐԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ» 2005թ. Հունվարի 20-ի N 64-Ն որոշում:



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ,  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐԻ  
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

**ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ N 02 10 - 2 1**

**2-1-Ջ/4-Մ-Ն**

**«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՄՊԸ**

*(Ջրօգտագործողի անվանումը)*  
**«ԶԻՉԻՍԱՆ» ՓԲԷԿ**

**ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ**

**«ԼԵՌ ԵՎ ՋՈՒՐ» ՄՊԸ**

*(Ջրային ռեսուրսների կառավարման և*

*ջրօգտագործման բույլտվություն ստացողի*

**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԵՐՏՈՒՑՅԱԼ**

**ՏՆՅՈՒՆԻ ՄԻՍՏՆՅԱԼ**

*պահպանության հարմար զինվածություն)*

*պաշտոնը, ստորագրությունը,*

*ստորագրությունը, ամսաթիվը, պաշտոնը*

*պաշտոնը, ստորագրությունը, ամսաթիվը, պաշտոնը*

**Կ.Տ**

Տրված է 25 05 2021 թ. Ուժի մեջ է մինչև 25 05 2022 թ.

Գործունեության ժամկետը երկարաձգված է մինչև \_\_\_\_\_ 20 \_\_\_\_\_ թ.

*(Ջրային ռեսուրսների կառավարման և*

*ջրօգտագործման բույլտվություն ստացողի*

*պահպանության մարմնի ղեկավար)*

*պաշտոնը, ստորագրությունը, ամսաթիվը, պաշտոնը*

1. **Ջրօգտագործողի հասցեն** \_\_\_\_\_

ՀՀ Լոռու մարզ, գ. Շիրակամուտ, հեռ. (094) 13 22 22

(ջրօգտագործման թույլտվություն ստացողի անվանումը, (անունը, ազգանուն, հասցեն և հեռախոսը)

2. **Ջրօգտագործման վայրը** \_\_\_\_\_ **ՀՀ Լոռու մարզ.**

Շիրակամուտ համայնքի վարչական տարածք

3. **Ջրառի վայրը** \_\_\_\_\_ **ՀՀ Լոռու մարզ.**

Շիրակամուտ համայնքի վարչական տարածք

4. **Ջրօգտագործման նպատակը** \_\_\_\_\_ / **Էներգետիկ** /

**ՓԳԷ-ի կառուցում / շահագործում /**

5. **Ջրօգտագործման ծավալը, այդ թվում՝**

ա) **մակերևութային ջրային ռեսուրսներ** \_\_\_\_\_ **Չիխան գետ**

**Նայբանդի ոռոգման ջրանցք**

I – 0.50 մ<sup>3</sup>/վրկ, II – 0.39 մ<sup>3</sup>/վրկ, III – 0.60 մ<sup>3</sup>/վրկ, IV – 1.30 մ<sup>3</sup>/վրկ

V – 1.00 մ<sup>3</sup>/վրկ, VI – 1.30 մ<sup>3</sup>/վրկ, VII – 0.70 մ<sup>3</sup>/վրկ (1-15), VIII – 0.0 մ<sup>3</sup>/վրկ

IX – 0.60 մ<sup>3</sup>/վրկ(15-30), X – 0.60 մ<sup>3</sup>/վրկ, XI – 0.50 մ<sup>3</sup>/վրկ, XII – 0.50 մ<sup>3</sup>/վրկ

բ) **ստորերկրյա ջրային ռեսուրսներ** \_\_\_\_\_ **Է**

6. **Ջրօգտագործման ժամանակահատվածը և ռեժիմը** \_\_\_\_\_

Տարեկան 335 օր 24 ժամյա ռեժիմով:

7. **Ջրօգտագործման թույլտվության պայմանների ապահովման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները** \_\_\_\_\_

1. **Ջրօգտագործման նպատակայնություն:**

2. **Ջրառի կետում էկոլոգիական թողքի ապահովում:**

\* Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքով սահմանված դեպքերում ստորերկրյա ջրերի օգտագործման համար պահանջվում է նաև ընդերքօգտագործման պայմանագիր:



8. Ջրային ռեսուրսներ կամ դրանց ջրահավաք ավազաններ թափվող կեղտաջրերի թույլատրելի ծավալները Չիխան գետ

I – 0.50 մ <sup>3</sup> /վրկ, II – 0.39 մ <sup>3</sup> /վրկ, III – 0.60 մ <sup>3</sup> /վրկ, IV – 1.30 մ <sup>3</sup> /վրկ
V – 1.00 մ <sup>3</sup> /վրկ, VI – 1.30 մ <sup>3</sup> /վրկ, VII – 0.70 մ <sup>3</sup> /վրկ (1-15), VIII – 0.0 մ <sup>3</sup> /վրկ
IX – 0.60 մ <sup>3</sup> /վրկ(15-30), X – 0.60 մ <sup>3</sup> /վրկ, XI – 0.50 մ <sup>3</sup> /վրկ, XII – 0.50 մ <sup>3</sup> /վրկ

9. Արտահոսքի նկարագրությունը \_\_\_\_\_

ՓՅԷԿ-ի ջրահեռացումից ջրի քանակական  
փոփոխություն տեղի չի ունենում:

10. Կեղտաջրերում վնասակար նյութերի թույլատրելի սահմանային արտահոսքի տվյալները \_\_\_\_\_

ՓՅԷԿ-ի ջրահեռացումից ջրի որակական  
փոփոխություն տեղի չի ունենում:

11. Ջրերի ստանդարտները և(կամ) դրանց վերաբերյալ հրապարակումների տեղեկությունները \_\_\_\_\_

Ջրային ռեսուրսների մոնիտորինգի (ջրի որակի և քանակի)  
իրականացման դեպքում արդյունքների վերաբերյալ  
տեղեկատվության հրապարակում տեղական լրատվական  
միջոցներում անհրաժեշտության դեպքում:

12. Հատուկ միջոցառումներ, որոնք կիրառվելու են արդյունավետ ջրօգտագործումը խթանելու և ջրի որակը բարելավելու, գերիտնավ և առափնյա կարևոր բնական միջավայրերը և առնչվող կենսաբազմազանությունը պահպանելու համար \_\_\_\_\_

Ջրառի կետում նախատեսել ձկնապաշտպան կառույցներ, ջրառն իրականացնել  
ապահովելով սահմանված ջրային ռեսուրսի էկոլոգիական թողքը

I – 0.20 մ <sup>3</sup> /վրկ, II – 0.24 մ <sup>3</sup> /վրկ, III – 0.42 մ <sup>3</sup> /վրկ, IV – 0.96 մ <sup>3</sup> /վրկ
V – 0.81 մ <sup>3</sup> /վրկ, VI – 0.41 մ <sup>3</sup> /վրկ, VII – 0.25 մ <sup>3</sup> /վրկ, VIII – 0.20 մ <sup>3</sup> /վրկ
IX – 0.20 մ <sup>3</sup> /վրկ, X – 0.32 մ <sup>3</sup> /վրկ, XI – 0.35 մ <sup>3</sup> /վրկ, XII – 0.24 մ <sup>3</sup> /վրկ



N 0210 25.05.2021թ.

**ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍ  
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

ՀՀ ջրային օրենսգրքի հոդված 32-ի պահանջների համաձայն մշակված սույն պայմանները ենթակա են պարտադիր կատարման: Սույն պայմանների խախտումը, համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 30.2 հոդվածի, հիմք է ջրօգտագործման թույլտվության կասեցման համար:

1. «Լեռ և ջուր» ՍՊԸ – ն («Չիչխան» փհէկ) պարտավոր է՝  
ա/ ապահովել՝ N 0210 ջրօգտագործման թույլտվության ստացմամբ և ջրօգտագործման իրականացմամբ պայմանավորված ՀՀ օրենսդրության պահանջների կատարումը:  
բ/ արտակարգ իրավիճակներում և սակավաջրության ու երաշտի պայմաններում ապահովել՝ շրջակա միջավայրի նախարարության պահանջները, որոնք ուղղված են հասարակական շահին և շրջակա միջավայրի պահպանմանը:

գ/ իր գործունեությամբ չնվազեցնել՝ մինչև N 0210 ջրօգտագործման թույլտվության ստացումը գոյություն ունեցող ավանդական ջրօգտագործողների ջրօգտագործման իրավունքները:  
դ/ ապահովել պայմաններ՝ շրջակա միջավայրի նախարարության կողմից ջրօգտագործման թույլտվության պայմանների կատարումը հսկելու համար:

ե/ խմելու-կենցաղային և/կամ ոռոգման նպատակներով հայտի ստացման դեպքում ընկերությունը շրջակա միջավայրի նախարարության պահանջով պարտավոր է ջրօգտագործման թույլտվությունը ներկայացնելու շրջակա միջավայրի նախարարություն՝ ջրօգտագործման ծավալների վերանայման:

2. Սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո N 000041 ՋԹ-ն տրված 06.05.2019թ. այլևս չի գործում:

3. ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից փհէկ-ի էլեկտրական եներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա ստանալու դեպքում սահմանված կարգով լիցենզիայի պատճենը 10-օրյա ժամկետում ներկայացնել ԼԹՀ վարչություն:

4. Օրենքով սահմանված կարգով «Չիչխան» փհէկ-ի նախագիծը ներկայացնել շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության:

5. Ապահովել ՀՀ կառավարության 14.01.10թ. «Արդիական տեխնոլոգիաների կիրառման, ջրային ռեսուրսների մոնիտորինգի բարելավման և աղտոտման նվազեցման ու կանխման միջոցառումները սահմանելու մասին» N 118-Ն որոշման պահանջները:

6. Հրավազանային կառավարման պլանների հաստատումից կամ դրանցում փոփոխություններ կատարելուց հետո նախկինում տրամադրված ջրօգտագործման թույլտվություններն ենթակա են վերանայման:

7. Սույն ջրօգտագործման թույլտվությունն ուժի մեջ մտնելուց հետո Հայաստանի Հանրապետությունը և ջրային ռեսուրսների կառավարման ու պահպանության մարմինը պատասխանատվություն չեն կրում ջրային ռեսուրսների նվազման հետևանքով ջրօգտագործողի կրած վնասների համար և չեն հատուցում դրանք:

8. Հրառի և ջրահեռացման կոորդինատական կետերն են.

X = 44° 09' 28.57"    Y = 40° 51' 54.3"    H = 1740.0 մ  
X = 44° 09' 39.0"    Y = 40° 52' 03.4"    H = 1640.0 մ

ՀՀ շրջակա միջավայրի նախարար

Ռ. Պետրոսյան

«25» 05 2021թ.



«Լեռ և ջուր» ՍՊԸ-ի տնօրեն

Լ. Սիմոնյան

«25» 05 2021թ.